ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» դեկտեմբերի 2012թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.31 շենքի հ.40՝ 57.0քմ. մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.07.2012թ. հ. 09072012-01-0490 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Կորյուն Տիգրանի Ավանյանին և Նինա Գերասիմի Բաղդասարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ. 31 շենքի հ. 40՝ 57.0քմ. մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Կորյուն Տիգրանի Ավանյանի ընտանիքին:

ՀՀ ՆԳ նախարարության Շահումյանի շրջանի ՆԳ բաժնի ղեկավարության միջնորդությամբ և Շահումյանի շրջգործկոմի որոշումով 1981 թվականին առաջարկվել է միլիցիայի մայոր Կ.Ավանյանին հատկացնել Շինարարների փողոցի հ. 31 շենքի հ. 40 ծառայողական բնակարանը: Այդ պահին շենքը վթարային էր, քանդման ենթակա, ինչի պատճառով օրդեր չի ձևակերպվել: Նշված բնակարանը ստանալու պահից Կ.Ավանյանը իր ընտանիքով բնակվում է, որպես վարձակալ: 1986 թվականին կատարվել են շենքի ամրացման աշխատանքներ և 4-րդ աստիճանի վթարայնությունը փոփոխվել է: 1997 թվականից սկսած Կ.Ավանյանը դիմել է բնակարանը սեփականաշնորհելու խնդրանքով, սակայն գործընթացը չի իրականացվել, բնակարանի հատկացման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով:

Շինարարների փողոցի հ. 31 շենքի հ. 40 բնակարանը ներկայումս հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.07.2012թ. հ.09072012-01-0490 վկայական/:

Երևանի «Աջափնյակ - 5» համատիրության 23.06.2012թ. տրված տեղեկանքի համաձայն Կորյուն Ավանյանը 1995 թվականից մինչև օրս բնակվում է վերը նշված հասցեում, կատարել է բնակարանի համար սահմանված վճարումներ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի բնակարաններն անհատույց կարող են տրամադրվել Երևանի քաղաքապետի որոշմամբ, իսկ սահմանված չափորոշիչների բացակայության դեպքում, որպես համայնքային գույքի տնօրինող մարմին, Երևանի ավագանին իրավասու է քննարկելու բնակարաններն անհատույց տրամադրման հարցերը:

Ելնելով նշվածից «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ